ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌՈՒՑԱԴՐԱԿԱ
ՄԱՐՄԻՆՆԵ

Հայաստանի համայնքների միությունն իր գործունեությունն իրականացնում է իր կառավարման մարմինների միջոցով, որոնք են՝



Ընդհանուր ժողովը Միության կառավարման բարձրագույն մարմինն է, որն ունի Միության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Ընդհանուր ժողովը գումարվում է հինգ տարին մեկ անգամ: Ընդհանուր ժողովում ներկայացված են Հայաստանի համայնքների Միության բոլոր անդամները՝ հավասար ձայնի իրավունքով:

Հանրապետական խորհուրդը ձևավորվում, և դրա կազմն ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ հինգ տարի ժամկետով: Խորհրդի անդամների թիվը շուրջ 100 է: Միության անդամ յուրաքանչյուր քաղաքային համայնքի ղեկավար, քաղաքային բնակավայր պարունակող համայնքի ղեկավար Հանրապետական խորհրդի անդամ է: Հանրապետական խորհրդի անդամ գյուղական համայնքների թիվը հավասար է խորհրդի անդամ քաղաքային համայնքների թվին՝ յուրաքանչյուր մարզից 4-8 համայնքի ներկայացվածությամբ: Հանրապետական խորհուրդը նաև սահմանել է հատուկ քվոտա՝ իր կազմում համայնքի կին ղեկավարների ներկայացվածությունն ապահովելու նպատակով: Ներկայումս Հանրապետական խորհրդի անդամներից 5-ը կին են, որոնցից 3-ը՝ սահմանված քվոտայով:

Հանրապետական խորհրդի նիստերը գումարվում են տարեկան առնվազն մեկ անգամ:

Հանրապետական խորհուրդը սահմանում է Միության գործունեության, քաղաքականության և ռազմավարության սկզբունքները, ընդունում է կարծիքներ/դիրքորոշումներ Միության բոլոր անդամների անունից տեղական ինքնակառավարմանը վերաբերող քաղաքականությունների և իրավական ակտերի վերաբերյալ:

Վարչության կազմն ընտրում է Հանրապետական խորհուրդը՝ իր կազմից 2.5 տարի ժամկետով: Վարչությունն ունի 32 անդամ՝ Երևանի, Գյումրու, Վանաձորի քաղաքապետերը, յուրաքանչյուր մարզից 1 քաղաքային բնակավայր ունեցող համայնքի ղեկավար և 1 գյուղական համայնքի ղեկավար, Միության նախագահը և Միության վեց մշտական հանձնաժողովների նախագահները, ինչպես նաև ըստ սահմանված քվոտայի՝ 2 կին համայնքի ղեկավար:

Միության վարչության նիստերը հրավիրվում են տարին առնվազն չորս անգամ: Վարչությունն ապահովում է Ընդհանուր ժողովի և Հանրապետական խորհրդի որոշումների իրականացումը, ինչպես նաև իրականացնում է Միության տարեկան աշխատանքային պլանի, ֆինանսական կառավարման և կառավարման մարմինների որոշումների իրականացման գործընթացների վերահսկողություն: Վարչությունը նաև մշակում է Միության միասնական դիրքորոշումները՝ ներկայացնելով Հանրապետական խորհրդի հաստատմանը, և համակարգում է Միության շահերի պաշտպանության գործունեությունը՝ Ազգային ժողովի, Կառավարության և պետական կառավարման այլ մարմինների հետ հարաբերություններում:

Նախագահն ընտրվում է Միության Ընդհանուր ժողովի կողմից հինգ տարի ժամկետով՝ վերընտրվելու իրավունքով: Միության նախագահ կարող է դառնալ վերջին հինգ տարիների ընթացքում համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի պաշտոնը զբաղեցնող կամ զբաղեցրած յուրաքանչյուր անձ: Ընտրվելուց հետո, սակայն, Միության նախագահը չի կարող զբաղեցնել պաշտոն տեղական ինքնակառավարման կամ պետական կառավարման մարմիններում կամ իրականացնել որևէ այլ վճարովի աշխատանք:

Միության նախագահը համակարգում է Միության հանրապետական խորհրդի, վարչության և Միության այլ մարմինների աշխատանքները, իրականացնում է ներկայացուցչական լիազորություններ, անում է հայտարարություններ:

Գործադիր տնօրենը ընտրվում է Հանրապետական խորհրդի կողմից: Գործադիր տնօրենը իրականացնում է Միության ընթացիկ կառավարումը, այդ թվում՝ ղեկավարում է Միության աշխատակազմը, ապահովում է անդամների հետ հաղորդակցությունը, կառավարում է Միության ֆինանսական ռեսուրսները, ներկայացնում է տարեկան հաշվետվություններ Միության գործունեության և ֆինանսական հոսքերի վերաբերյալ:

Միության Վերստուգիչ հանձնաժողովն ունի 5 անդամ, ովքեր ընտրվում են Ընդհանուր ժողովի կողմից՝ 5 տարի ժամկետով: Վերստուգիչ հանձնաժողովի անդամ չեն կարող դառնալ Միության կառավարման մյուս մարմիններում ներգրավված անդամները: Վերստուգիչ հանձնաժողովն իրականացնում է վերահսկողություն Միության ֆինանսական գործունեության և գործունեության օրինականության նկատմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ